ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, բարտուղարություն 374-001, ֆաքս 370-296

№ 4/68 «21» 01 2020 թ.

Ձեր

«ԿԱՐԵՆ ՕԻԼ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 04720098)
տնօրեն Հ. Մկրտչյանին
ք.Երևան, Արցախի 23/101
էլ. հասցե՝ karenoilsp@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը անբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության զորքերի և «ԿԱՐԵՆ ՕԻԼ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով շարժիչի յուղի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԿԱՐԵՆ ՕԻԼ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի (մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան պետք է մատակարարեր 1000 լիտր Շարժիչի յուղ՝ SAE 15 W 40, սակայն ընդհանրապես չի մատակարարել):

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝

Կատարող՝ Ս. Համբոյան
Հեռ. 010-37-40-15

ՀՀ ոստիկանության զորքերը 2019թ-ի դեկտեմբերի 30-ին ամբողջությամբ միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «ԿԱՐԵՆ ՕԻԼ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից իսկ «ԿԱՐԵՆ ՕԻԼ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո, հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 500005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել՝ Պայմանագրի 6.2-րդ կետով հաշվարկված գումարը՝ 78540 ՀՀ դրամ:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 93500 ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«ԿԱՐԵՆ ՕԻԼ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

հրամանատարի պարտականությունների
ժամանակավոր կատարող
փոխգնդապետ ***Գ. Դալլաքյան***

Կատարող՝ Ս. Համբոյան
Հեռ. 010-37-40-15